ՍՈՒՐԵՆ Շ. ՎԱՆԵՑԻ

ԻՆՉՊԵՍ ԷՐ ՍՏԵՂԾՎՈՒՄ ՎԵՀԱՓԱՌԻ «ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Սկզբից իսկ մի վերապահություն, որն անհրաժեշտ է՝ հետագա շարադրանքը մինչև վերջ ըմբռնելի դարձնելու համար: Մտադրություն չունեմ երկար-բարակ պատմել այն մասին, թե ինչպես եմ աշխատել Կաթողիկոս Վազգեն Առաջինի կյանքի ու գործունեության համառոտ տարեգրությունը պատրաստելու վրա, հանրապետության որ արխիվներից ու գրապահոցներից եմ հավաքել ինձ հարկավոր նյութերը, կամ ներքին-մասնագիտական ինչ օրինաչափությունների հիման վրա եմ այդ ամենը ներկայացրել իմ բազմաքանակ ընթերցողներին: Աշխատանքի հետ կապված այսպիսի «խոհանոցային» խնդիրները չեմ կարծում, որ կարող են հետաքրքրական լինել, մանավանդ որ, նախ «Համառոտ տարեգրության»՝ հրապարակի վրա եղած առաջին հատորին ծանոթանալուց հետո, նմանատիպ հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, որոշակի խորությամբ, կարելի կլինի ստանալ, և ապա՝ ներկա հոդվածի բնույթն ու ներքին տրամաբանությունն այնպիսին է, որ ինչ-որ չափով ու սահմաններում, իմ աշխատանքային «խոհանոցին» անդրադառնալու հարկը դարձյալ լինելու է: Անհրաժեշտ է նշել, որ «Համառոտ տարեգրությունը»՝ սկսած նրա ամենաերկրորդական հարցերից, մինչև Մայր Աթոռի տպարանից՝ որպես առանձին աշխատություն հրապարակ ելնելը, մշտապես եղել է Ն.Ս. Օծության անընդմեջ ուշադրության կենտրոնում, արժանացել է նրա մանրակրկիտ հսկողությանն ու ղեկավարությանը, յուրաքանչյուր փաստի կամ հասարակական երևույթի տարեգրման կապակցությամբ, եղել են նրա ուղենշող խորհուրդներն ու արժեքավոր դիտողությունները: Այլ կերպ և քիչ աշխարհիկ ոճով ասած՝ Վեհափառ Հայրապետը եղել է իմ կազմած «Համառոտ տարեգրության» գիտական ղեկավարը: Եվ եթե այսօր մենք ունենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա, որի հոգևորական բանիբուն գործունեությունը լայնորեն հայտնի է ամբողջ աշխարհին, եթե ունենք շուրջ քառասունհինգ մեծ ու փոքր հոդվածների ու գիտական աշխատությունների հեղինակ մի մտավորական, որի «Կ.», «Կ.Պ.», «Կ.Պալճյան», «Լևոն», «Լ.Կ.Պալճյան», «Վազգեն վարդապետ», «Տ. Վազգեն Պալճյան», «Վազգեն եպիսկոպոս» և վերջապես՝ «Տ.Տ. Վազգեն Ա., Կաթողիկոս Ամենայն Հայոց» ստորագրություններն

ունեցող գործերը հանրահայտ են թե Մայր Հայրենիքում, և թե Սփյուռքում, եթե վերջապես, այսօր, միայն անսքող հիացմունք է պատճառում Լուսավորչի Ս. Գահի 130-րդ գահակալի կազմակերպչական-ադմինիստրատիվ բացառիկ կարողությունները և այլն, – իսկ այս թվարկումը կարելի է էլի շարունակել, – ապա Վազգեն Կաթողիկոս՝ մտավոր գործունեության կազմակերպչի, կամ Վազգեն Կաթողիկոս՝ աշխատանքի գիտական ղեկավարի մասին, որքան ինձ հայտնի է, առ այսօր ոչինչ չի ասվել կամ գրվել: Այս է ահա, որ համարձակություն է տալիս ինձ, «Համառոտ տարեգրության» փաստը և, մանավանդ, Ն.Ս.Օծության ծննդյան ութսունամյակի խնկելի տարեդարձը բարեպատեհ առիթ դարձնելով, վերարտադրել մի քանի բնութագրական դրվագներ մեր անզուգական Հայրապետի աշխատանքային գործունեության՝ ահա այդ բնագավառի մասին:

Իսկ աշխատանքային այդ գործունեությունը ծայր առավ 1983 թ. սկզբներից, երբ նոր էր լույս տեսել իմ հեղինակած «Հայ նոր գրականության ժամանակագրության» երկրորդ գիրքը և ես, սրտումս ներքին անհանգստությամբ ու հուզմունքով, գրքի մի օրինակը համապատասխան մակագրությամբ ձեռքիս, աճապարեցի Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետին նվիրելու համար: Պարծենալու կարգով նշեմ, որ Վեհի մոտ մուտք ունենալու իմ իրավունքը մի քանի տարվա պատմություն ուներ: Այդ գործի «կազմակերպիչն» էր Գերագույն հոգևոր խորհրդի այն ժամանակվա անդամ Առաքել Առաքելյանը:

Ի թիվս այլևայլ հարցերի, որոնք Ն.Ս. Օծության մոտ անխուսափելիորեն պետք է ծագեին իմ գրքի հետ կապված, և որոնց վերաբերյալ պատասխաններն արդեն պատրաստել էի, ցանկանում էի խոսել մեկ այլ խնդրի շուրջ և որոշել էի խոսակցությունը այդ հունով տանել:

Վեհափառ Հայրապետն ինձ ընդունեց Վեհարանի իր փոքրիկ աշխատասենյակում գրասեղանի մոտ: Թերթելով «Հայ նոր գրականության ժամանակագրությունը» նա զանազան հարցեր էր տալիս գրքին առնչվող աշխատանքային խնդիրների մասին՝ որտեղից եմ հավաքում նյութերը, ինչպես եմ դասդասում դրանք, կա՞ն գրքեր կամ փաստեր, որոնք դուրս են մնում և ինչո՞ւ, և այլն:

Պատասխանում էի հնարավորինս կարճ ու փաստալից, քանզի գիտեի, որ Կաթողիկոսը երկար-բարակ խոսքի սիրահարներից չէ: Վեհի մի քանի աշխատությունների ու հոդվածների ընթեցումը ինձ բերել էր այն որոշակի համոզման, որ նրա համար առաջնահերթ նշանակություն ունեցողը փաստն է:

- Պարոն Սուրեն, իսկ ռումինահայ կյանքը ձեր հատորում արտացոլվա՞ծ է:

Այս հարցին ես սպասում էի: Ասացի, որ ռումինահայ համայնքը տվել է կրթական-մշակութային ոչ քիչ թվով գործիչներ, որոնք, ինչ խոսք, տեղ են գտել իմ գրքում, իսկ գործիչների մի խումբ էլ դուրս է մնացել, որովհետև նրանք եղել են բժիշկներ, զինվորական հրամանատարներ, ճարտարապետներ, պետական գործիչներ և ուրեմն՝ հայ գրականության հետ ոչնչով չառնչվող մարդիկ:

Վեհափառը գլխով արեց ի նշան համաձայնության, փակեց-մի կողմ դրեց գիրքը և դարձավ ինձ.

- Ասացեք, իսկ դուք անհատ մարդու ժամանակագրություն կազմե՞լ եք:

Հարցը որքան անսպասելի, նույնքան էլ հաճելի էր ինձ համար, մանավանդ որ ինքս էի որոշել այդ մասին խոսել:

Ասացի, որ անհատ մարդուն վերաբերող այդպիսի գործը արդեն չի կոչվում «Ժամանակագրություն», այլ կոչվում է «Տարեգրություն»: Ես, ի թիվս մյուս գործերի, շարունակում եմ աշխատել Ղևոնդ Ալիշանի կյանքի ու գործունեության տարեգրության վրա, և այս կապակցությամբ բավական բան արել եմ: Հավելեցի, որ Ալիշանի վիթխարի արխիվը ամբողջությամբ գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մոտ և այս կապակցությամբ իմ բոլոր փորձերը՝ որևէ գիտական կապի մեջ մտնելու նրանց հետ, առայժմ ոչնչի չեն հանգեցրել: Իսկ բավական է ասել միայն, որ Ալիշանի՝ իմ ձեռքի տակ եղած նամակների թիվը, որոնք տարիների ընթացքում հավաքել եմ Հայաստանի և միության այլևայլ արխիվներից, չի անցնում երկու հարյուրից, իսկ իրենց՝ Մխիթարյանների մոտ գտնվող Ալիշանի գրչին պատկանող նամակները հազարից անց են:

Վեհափառը լսում էր և դրականորեն շարժում գլուխը։

Ժամանակն արդեն հասունացել էր, ուստի օգտվելով կարճատև լռությունից, ուղղակիորեն դիմեցի խոսակցիս.

- Վեհափա՛ռ, իսկ եթե փորձենք կազմել Ձեր կյանքի ու գործունեության տարեգրությունը...

Այս էր ասելիքս, այս մեկ հատիկ նախադասությունը, որը ես պտտում էի գլխումս, որը արդյունք էր երկարատև մտորումների ու մեկից ավելի անքուն գիշերների խորհրդածությունների։

Վեհափառը նայեց ինձ ուշադիր, կենտրոնացած.

- Իմ տարեգրությո՞ւնը, է՛հ, դա պե՞տք է որ...

- Իհարկե, Վեհափառ, – եռանդով շարունակեցի ես, – դա կլինի Ձեր ամբողջ կյանքը՝ շարադրված փաստերի ու թվերի լեզվով, որն էլ հստակորեն կընութագրի ձեր անցած ճանապարհը, սկսած ամենասկզբից՝ Ձեր ծննդյան օրվանից, մինչև մեր ժամանակները։ Այսպիսի գործի պիտանիությունը արդեն վեր է որևէ կասկածից։ Մեր բոլոր հայրապետների սխալն այն է եղել, – զգալով, որ Վեհը աչալուրջ լսում է ինձ, խոսքս առաջ տարա ես, – որ իրենց գործով ու գործունեությամբ հոգևորական-հասարակական ականավոր դեմքեր լինելով հանդերձ, չեն հոգացել կազմել տալ իրենց կյանքի տարեգրությունը։

- Ինչո՞ւ որ, օրինակ Մկրտիչ Խրիմյանի տարեգրությունը կա։

- Դուք նկատի ունեք Փարիզում հրատարակված «Մկրտիչ Խրիմյան Հայրիկ» գի՞րքը, - Վեհափառը գլուխը շարժեց դրականորեն։- Դա առանձին ուսումնասիրություն է Մկրտիչ Խրիմյանի մասին և վերջում, ութ-տաս էջի սահմաններում տրված է նրա տարեգրությունը։ Դա ի՞նչ գործ է, որ...

- Իսկ դուք իմ տարեգրությունը ինչպես եք պատկերացնում։

- Պատկերացնում եմ երկու կամ երեք մեծադիր հատորներ, յուրաքանչյուրը շուրջ քսան հեղինակային մամուլ ծավալով, այսինքն՝ յուրաքանչյուր հատորը մոտ հինգ հարյուր մեքենագիր էջ:

Նայեց ինձ ավելի լուրջ, ավելի կենտրոնացած.

- Վիթխարի գործ եք մտածել, պարոն Սուրեն:

- Ամենայն Հայոց Կաթողիկոսի տարեգրությունը միայն այդպիսին կարող է լինել, Վեհափառ: Մանավանդ Ձե՛ր կյանքն ու գործը, որը, ինչպես հայտնի է, շատ հարուստ է ու բազմաբովանդակ:

Լռեցինք: Զգացի, որ Վեհափառը խորհում է ասածներիս մասին: Խանգարել չէի համարձակվում, բայց զգալով, որ մտածելու լրացուցիչ նյութ կարող եմ տալ, հավելեցի.

- Ներսես Կաթողիկոս Աշտարակեցու նման վիթխարի գործիչն անգամ չկարողացավ բարձրանալ մինչև այն գաղափարը, որ կազմել տար իր կյանքի ու գործունեության տարեգրությունը: Ինչքա՜ն կարևոր փաստական նյութ ընդմիշտ կորավ-անհետացավ մեզ համար: Ես չէի կամենա, որ այս սխալը կրկնվեր, և այն էլ մեր պայմաններում:

Վեհափառը սթափվեց իր մտքերից, մտազբաղ նայեց ինձ:

- Այո, դուք իրավացի եք:

Վեր կացավ, մեկնեց աջը: Հասկացա, որ ընդունելությունն ավարտված էր: Երբ Հայրապետական աջը համբուրելուց հետո պատրաստվում էի դուրս գալ սենյակից, կասեցրեց ինձ:

- Էհ, կխորհինք ձեր ասածների մասին: Դուք նորից եկեք, պարոն Սուրեն, բայց ոչ այս ժամին:

-Ձեզ ե՞րբ է հարմար, Վեհափառ:

- Երեկոյան, ցանկալի է ժամը 7-ի մոտ: Հիմա, ինչպես տեսնում եք, պահը հարմար չէ:

Եվ իրոք, մեր ողջ խոսակցության ընթացքում քարտուղար-սարկավագը հաճախակի ընդմիջում էր Վեհափառին, զանազան հրատապ հարցերով:

* * *

Հաջորդ տաս-տասնհինգ օրերը դարի չափ երկար թվացին ինձ: Նորից ու նորից էի վերհիշում մեր խոսակցության մանրամասները, մտքումս վերականգնում էի այս կամ այն՝ ինձ կարևոր թվացող միտքը, քննում էի, վերլուծում...

Իսկ մտածելիք իրոք կար:

Իհարկե, հուսադրիչ էր այն հանգամանքը, որ Վազգեն Կաթողիկոսի կյանքի ու գործի տարեգրությունը պատրաստելու վերաբերյալ իմ առաջարկությունը մերժման չարժանացավ, բայց պետք էր նաև ընդունել, որ անվերապահ համաձայնություն էլ չի եղել:

Մեկ այլ հարց էլ էր խորհելու առիթ տալիս:

Մեր հանդիպման ամբողջ տևողության ընթացքում Վեհը ոչ մի բառով և ոչ իսկ անգամ ակնարկով զգացնել չտվեց, որ այդ գործը, իրականացվելու դեպքում, պետք է հանձնարարվեր ինձ: Եվ օրինաչափն ու տրամաբանականը հենց այդ կլիներ՝ տարեգրության աշխատանքները ինձ չհանձնարարելը: Չէ՞ որ ես հոգևորական չէի, իսկ աշխարհում հայտնի չէ գեթ մեկ դեպք, երբ հոգևորականի, այն էլ Կաթողիկոսի, կյանքի տարեգրություն կազմելը հանձնարարվեր աշխարհիկ մարդու: Եվ եթե անգամ ընդունենք, որ Վեհը ինչ-ինչ նկատառումներից ելնելով նպատակահարմար համարեր այդ աշխատանքները հանձնարարել որևէ աշխարհականի, ապա ինչո՞ւ այդ թեկնածուն անպայման պետք է ես լինեի: Ինչքան կային մտավորականներ, թե՛ Մայր Հայրենիքում, և թե՛ Սփյուռքում, որոնք թե իրենց կոչումներով ու տիտղոսներով, թե կատարած գործով, թե հայկական գրական-հասարակական կյանքում զբաղեցրած դիրքով շատ ավելի երևելի էին, քան ես:

Այս բոլորի համամիասնությունն էր պատճառը, որ մեր առաջին հանդիպումից շուրջ երկու շաբաթ անց՝ 1982 թ. մարտի 11-ին, երեկոյան ժամը 7-ին, նորից սլացա Մայր Աթոռ:

Այս անգամ գնացել էի լրիվ «զինված»: Նախ, ուշադրությամբ վերընթերցել էի Վեհափառի կենսագրությունը և մի քանի կարևոր իրողություններ պահել էի մտքումս: Ինձ հետ վերցրել էի Արամ Ինճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» աշխատությունը և Երմիլովի «Ա. Չեխովի տարեգրությունը» հսկայածավալ ռուսերեն հատորը, Վեհափառին ցույց տալու և ապացուցելու համար, որ տարեգրական-ժամանակագրական բնույթի գործերը մեծ կարևորություն ունեն թե մեզ մոտ, և թե Ռուսաստանում: Ինձ հետ էի վերցրել նաև «Սովետական արվեստ» ամսագրի այն համարները, որոնցում հատվածաբար հրատարակվում էր Խաչիկ Սամվելյանի կազմած «Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունը», որն ի դեպ, որոշ ընդմիջումներով հրատարակվեց ամսագրի մի քանի տարվա հատորներում: Ցանկանում էի Վեհափառին ապացուցել, որ կյանքի ու գործունեության տարեգրություն ունենալու պատվին արժանացել են ոչ միայն աշխարհիկ մտավորականները, այլև հայ հոգևորականության ներկայացուցիչ Կոմիտասը:

... Պարետատանը, տեղեկանալով, որ գնում եմ Վեհափառի հետ հանդիպման, ինձ հանձնեցին մի քանի կնիքներով զմռսված ազդեցիկ մի ծրար, և ապսպրեցին հանձնել «ըստ պատկանելվույն», ինչը և կատարեցի՝ Վեհարանի մեծ ընդունարանում Վեհափառին ներկայանալուց և ընդունելության համապատասխան արարողությունից անմիջապես հետո: Դատելով նրանից, որ կարդալու ընթացքում Վեհի դեմքն աստիճանաբար ողողվեց գոհունակությամբ ու ներքին բավականությամբ և նա, ընթերցելու ժամանակ սկսեց մատով տկտկացնել սեղանին, կռահեցի, որ նամակը մեծ ուրախության առիթ տվեց «հասցեատիրոջը»:

- Է՜հ, լավ է, շատ լավ , դուք ինձ ուրախ լուր բերեցիք, – ասես հաստատելու համար իմ ներքին կռահումը, ժպտալով ինձ դարձավ Վեհափառը:

- Անչափ ուրախ եմ, որ Վեհափառ Հայրապետին ուրախություն պատճառեցի, – պատասխանեցի ես և զգուշորեն առաջ մղեցի գրքերը՝ բուն խոսակցությունը սկսելու համար։

Նկատեց.

- Այդ ի՞նչ գրքեր են, պարոն Սուրեն։

Համապատասխան մեկնաբանություններով՝ ներկայացրեցի նախ Երմիլովի, ապա Ինճիկյանի կազմած տարեգրությունները, շեշտելով հատկապես, որ տարեգրողի համար գոյություն չունի առաջնային կամ երկրորդական փաստ, նրա համար բացարձակապես ամեն ինչ կարևոր է։ Միքայել Նալբանդյանի կապակցությամբ, Ինճիկյանի գրքում ցույց տվեցի մի դրվագ, որը, թերևս, այնքան էլ լավ չէր բնութագրում մեր հեղափոխական-դեմոկրատին (երիտասարդ տարիքում, Նոր Նախիջևանում, նա վիճաբանել էր Ներսես Աշտարակեցու հետ և Կաթողիկոսին անվանել էր «կնաթողիկոս»), բայց անգամ դա պետք է արձանագրել։

Վեհափառը, որն առանց այդ էլ բարձր տրամադրության մեջ էր, բարձրաձայն ծիծաղեց, ապա անսպասելիորեն դարձավ ինձ.

- Է՜, պարոն Սուրեն, իմ «Տարեգրությունը» կազմելիս, դո՞ւք էլ այդպես պիտի վարվեք։

Այս նախադասությունը ասես արձագանք տվեց ամբողջ էությանս մեջ։ ՈՒրեմն Վեհափառը, անկասկած երկար մտորումներից հետո, ոչ միայն համոզվել է իր կյանքի ու գործի «Տարեգրություն» կազմելու անհրաժեշտության մեջ, այլև այդ աշխատանքները հանձնարարվելու են ինձ։

- Վեհափառ, այդ աշխատանքն ինձ է հանձնարարվում, այո՞։

- Անշուշտ, - տոնը հաստատուն էր, որևէ կասկածի տեղիք չտվող, – ես ձեզնից ավելի հարմար թեկնածու չեմ տեսնում։ Դուք հմուտ եք այդ աշխատանքներում, ձեր անելիքը գիտեք։

Հետագա խոսակցությունն արդեն գնաց «Տարեգրությունը» կազմելու աշխատանքների հետ կապված այլևայլ մանրամասները ճշտելու, որոշ սկզբունքային հարցեր ավելի պարզաբանելու ու հստակեցնելու ուղղությամբ։ Վեհափառին

հատկապես հետաքրքրեց իր, այսինքն՝ «գործող» կաթողիկոսի կյանքը տարեգրելու խնդիրը, և այդ երևույթի՝ թե մեզ մոտ, և թե մանավանդ Սփյուռքում ծայր առնելիք հասարակական-քաղաքական արձագանքները։ Այս կապակցությամբ մենք ամենախիսկական գիտական բանավեճ ունեցանք։

- Պարոն Սուրեն, մինչև այսօր տարեգրությունները գրվել են տվյալ գրողի կամ մշակութային գործչի մահվանից շատ տարիներ հետո միայն։ Հենց թեկուզ սրանք,- ձեռքով ցույց տվեց սեղանի վրա դրված գրքերը, - իմ ասածն են հավաստում։ Այդ դեպքում, ինչքանով է հարմար, որ կազմվի կենդանի մարդու տարեգրություն։ Ես, ինչպես տեսնում եք, ողջ-առողջ եմ և մահանալու միտք չունեմ, – երկուսով էլ ծիծաղեցինք: - Հիմա հարմա՞ր է, որ գրվի իմ տարեգրությունը։

- Վեհափառ, դա հենց ամենամեծ սխալն է, որ արվել է մինչև այսօր, – եռանդով սկսեցի ես, – սպասում են, որ տարեգրվելիք անձնավորությունը մահանա, անցնեն տարիներ, իսկ հաճախ էլ տասնյակ տարիներ, փաստերը աղավաղվեն, խճճվեն, ըստ որում խճճվեն այնպես, որ արդեն անկարելի լինի դրանց պարզելը, և նոր միայն սկսում են կազմել տվյալ անձնավորության տարեգրությունը։ Չէ՞ որ դա ճիշտ չէ։

Կենտրոնացավ, մտահոգվեց։ Զգացի, որ վերլուծում է ասածս։

- Ահա տեսեք, - ցույց տվեցի Միքայել Նալբանդյանի «Տարեգրության» համապատասխան էջերը, – Միքայել Նալբանդյանը «Հյուսիսափայլի» էջերում հանդես է եկել բազմաթիվ ստեղծագործություններով, որոնց հեղինակային պատկանելության հարցը այսօր գրականագիտական-բանասիրական ամենալուրջ վեճերի տեղիք է տալիս...

- Ստորագրված չե՞ն։

- Մի մասը ստորագրված է, մյուսները զանազան կեղծանուններ ունեն, մի քանիսը ընդհանրապես ստորագրված չեն։ Եվ դրանք այսօր շատ վեճեր են հարուցում։ Իսկ եթե Նալբանդյանի «Տարեգրությունը» կազմվեր իր կենդանության ժամանակ, ապա տարեգրողը այդ հարցերը միանգամից կճշտեր հենց հեղինակի հետ, և ամեն ինչ ընդմիշտ կվերջանար։

Վեհափառն ուշադրությամբ լսում էր ինձ։

- Իսկ այս դեպքում նման սխալները բացառվում են: Դուք կլինեք իմ կողքին, և եթե ինձ մոտ սխալներ կամ վրիպումներ լինեն, Դուք իսկույն կուղղեք դրանք: Իմ աշխատանքի ընթացքում էլ, տարակարծությունների դեպքում, ես անհապաղ կդիմեմ Ձեզ՝ դրանք ճշգրտելու համար:

- Դուք ճիշտ եք ասում, – մտորելով հանդերձ խոսել սկսեց Վեհափառը, – ես իմ կյանքի դեպքերը լավ եմ հիշում և, անշուշտ, կկարողանամ օգտակար լինել գործին:

- Կա մի կարևոր հանգամանք ևս, – ավելի ոգևորված շարունակեցի ես, – անվիճելի փաստ է, որ Ձեր՝ թե աշխարհիկ, և թե մանավանդ հոգևորական կյանքում եղել են ոչ քիչ թվով դեպքեր ու իրադարձություններ, որոնք միայն Դուք գիտեք: Իսկ ինչքան շատ են եղել դեպքեր, որոնց ծնող պատճառները դարձյալ միայն Ձեզ են հայտնի: Այսինքն, դեպքը լավ-վատ գիտենք, իսկ շարժառիթը՝ ոչ: Ահա նաև սրանք են, որ անպայման պետք է բացատրվեն ու տարեգրվեն: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ անդառնալի կորուստ կլինի դրանց՝ մոռացության մատնվելը:

- Այո, – քիչ լռելուց հետո ասաց նա, – իմ կյանքում եղել են կարևոր դեպքեր, որոնք միայն ինձ են հայտնի, – մի պահ լռեց, ապա դարձավ ինձ, – ավելին, եղել են ոչ քիչ թվով կարևոր իրադարձություններ, որոնք ոչ մի պարբերականում և, առհասարակ, ոչ մի տեղ չեն արձանագրվել: Դրանք միայն ես գիտեմ:

- Ահա Վեհափառ, տեսնո՞ւմ եք, թե որքան անհրաժեշտ է Ձեր կյանքի և գործի տարեգրությունը:

Վեհը համաձայնության շարժում արեց և ոտքի ելավ: Կարծեցի, որ խոսակցությունն արդեն ավարտված է, բայց երբ ես էլ, իմ հերթին ոտքի ելնելուց և ինձ մեկնված Հայրապետական աջը համբուրելուց հետո ընդունարանից դուրս գալու շարժում արեցի, նույն Հայրապետական աջով կասեցրեց ինձ: - Գնանք դուրս:

Դուրս եկանք Վեհարանի առջևում տարածված ձյունածածկ տափարակը և սկսեցինք քայլել: Վեհափառը քայլում էր այնպիսի շեշտակի արագությամբ, որ սկզբում ինձ թվաց, թե ինչ-որ տեղ է շտապում, սակայն քիչ անց համոզվեցի, որ դա նրա զբոսնելու

սովորական ձևն է: Հասկանալի է, նույն կատաղի արագությունն էլ ստիպված «զարգացրեցի» նաև ես:

- Կա մի այսպիսի հարց էլ, – քայլելով հանդերձ՝ խոսել սկսեց Վեհափառը, – Սփյուռքում բոլորովին էլ քիչ չեն մեր եկեղեցու և անձամբ Վազգեն Կաթողիկոսի բարեկամները (Վեհափառը շեշտեց «բարեկամներ» բառը և ես հասկացա, որ այն ասվում է փոխաբերական իմաստով), որոնք առիթը չեն կորցնում մեզ վատաբանելու համար: Հիմա՝ հրապարակ ելնի մեր կյանքի ու գործունեության տարեգրությունը... Սա անհամեստ չի՞ հնչի արդյոք, և մենք հիանալի զենք չե՞նք տա մեր բարեկամներին:

- Վեհափառ, տարեգրողն արձանագրում է կատարված փաստը, առանց որևէ հավելումների ու զարդարանքների: Այս է նրա խնդիրը և նա իրավունք չունի դրանից փոքր իսկ շեղվելու: Այլ բան կլիներ, եթե ես չարած գործեր վերագրեի Ձեզ, կամ փաստերը ներկայացնեի անհիմն գունազարդումներով ու կողմնակի հավելումներով...

Կտրուկ ու շեշտակի ընդհատեց ինձ:

- Ոչ, ոչ, այդպիսի բաներ չպետք է լինեն, – տոնը բացարձակ էր և առարկություն չհանդուրժող, – մենակ այդ էր պակաս:

- Տեսնո՞ւմ եք, – շարունակեցի ես, – եթե այդ մոտեցմամբ տարեգրեինք, իհարկե, անհամեստություն կլիներ, և Դուք իրավացի կլինեիք: Բայց նման հավելումներ ինձ մոտ չեն լինելու: Մնացած դեպքերում, անվիճելի է, օրինակ, որ դուք ամսագրի հիմնադիր ու խմբագիր եք եղել, տարիներ շարունակ եղել եք ուսուցիչ, ռումինահայ թեմի առաջնորդ եղած ժամանակ օգնություն եք ցուցաբերել խորհրդային ռազմագերիներին: Այս ամենը, անշուշտ, հնարավորին չափ մանրամասն կնշվի: Իսկ այդ փաստերը հիմա կնշվեն, թե հարյուր տարի անց, Վազգեն Կաթողիկոսի օրոք արձանագրվեն, թե շատ ու շատ տարիներ հետո, միևնույն է, նույն ձևով են արձանագրվելու: Այնպես որ, ներեցեք ինձ Վեհափառ համարձակությանս համար, Ձեր մտավախությունը ճիշտ չէ:

Վեհափառը լսում էր ու մտորում...

- Ի վերջո, անառարկելի փաստ է, չէ՞, որ ահա սա (ձեռքով ցույց տվեցի Ղազարապատը) վերակառուցվել է Վազգեն Առաջին Կաթողիկոսի ժամանակ և նրա

եռանդուն ջանքերի շնորհիվ: Ով և երբ էլ արձանագրելու լինի այս իրողությունը, պետք է կապի Ձեր անվան հետ:

Վեհափառը վերհիշում էր...

- Իսկ ինչքան վատ էր ամբողջ Մայր Աթոռի վիճակը... Կաթողիկոս ընտրվելուց հետո ես մնալու տեղ անգամ չունեի և քնում էի ահա այնտեղ, – ցույց տվեց հին Վեհարանի կողմը, – մի անշուք սենյակում: Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի ժամանակ խորհրդի անդամների մի մասը տեղ չէր ունենում նստելու և ստիպված ոտքի վրա էր մնում: Էհ, ինչևէ, – Նա կանգ առավ: - Դուք ե՞րբ եք մտածում աշխատանքն սկսել:

- Հենց վաղվանից, Վեհափառ, – ոգևորված վրա տվեցի ես, – առավոտյան կգամ Մայր Աթոռ...

Նայեց ինձ պրպտող, քննող հայացքով.

- Ինչ-որ շատ հապճեպ չե՞ք սկսում, պարոն Սուրեն:

- Շտապելն անհրաժեշտ է, Վեհափառ, – արդեն ավելի հանդարտ խոսքս առաջ տարա ես, – մենք, իմ կարծիքով, արդեն շատ ենք ուշացել: Ձեր մասին, օրինակ, ինչքա՜ն կարևոր փաստեր կպատմեր Հակոբ Սիրունին, որը Ձեր ողջ գիտակցական կյանքի ուղեկիցն ու առաջնորդն է եղել...

- Միայն ի՞մ: Ռումինահայ մեր ամբողջ սերնդի կյանքի:

- Ահա տեսնո՞ւմ եք: Իսկ Արտաշես Տիրացյա՞նը: Չէ որ նա էլ կարող էր շատ օգտակար աղբյուր լինել ինձ համար: - Վեհափառը գլուխը շարժեց դրականորեն, – Ցավոք, երկուսն էլ արդեն չկան: Դրա համար էլ ուզում եմ շուտ սկսել, որպեսզի Ձեր մտերիմներից ոչ մեկին չկորցնենք:

Պատասխան չեղավ: Վեհափառը խորհում էր ասածներիս մասին:

- Իսկ ինչպիսի անզուգական աղբյուր կորցրեցինք, Վեհափառ, – նորից սկսեցի ես, – կորցրեցինք Տիրամորը: Ինչքան կարևոր բաներ նա կունենար պատմելու...

Պատասխանը՝ արագ քայլող Վեհափառի շեշտակի կանգ առնելը եղավ: Ծանր, անթափանց մի լռություն թագավորեց: Նայեց ինձ օտարոտի հայացքով, և չնայած երեկո էր, պարզ նկատեցի, թե ինչպես լցվեցին աչքերը: Տեսարանը վեհաշուք էր, առինքնող և, եթե կարելի է այսպես ասել, արքայականորեն պատկառազդու: Իմ առջև Ամենայն Հայոց

հոչակավոր Կաթողիկոս Վազգեն Առաջինն էր՝ հոգևորական-մշակութային-հասարակական նշանավոր գործիչը, տիպար Հայրապետը, հզոր կազմակերպիչը, բայց և՝ իմ առջև կարոտաբաղձ որդին էր, որ կորցրել էր իր ամենամեծ հարստությունը, իր թանկագին մայրիկին...

- Ահա այս բոլորի պատճառով էլ, Վեհափառ, – ոչ այնքան սահուն ձևով խոսակցությունը շարունակեցի ես, մտածելով, որ գոնե այդ ձևով վերջ կտամ ճնշող լռությանը, – ցանկանում եմ որքան կարելի է աշխատանքները շուտ սկսել, թեկուզ վաղվանից: Վաղը ես կգամ այստեղ:

Վեհափառը սթափվեց իր մտքերից, կենտրոնացած նայեց ինձ.

- Ոչ, վաղը հարմար չէ, – մտորեց, – վաղն Ամերիկայից հյուրեր ունեմ, և հետո... Դուք մի քանի օր հետո եկեք և սկսենք աշխատանքը:

Չնայած իմ եռանդուն առարկություններին, ինքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Առաջինը ինձ ուղեկցեց մինչև Վեհարանը եզրագծող երկաթյա պարիսպը և հրաժեշտի արարողությունից հետո, բարի ճանապարհ մաղթեց:

Վճռվա՛ծ է, ուրեմն՝ ի գործ:

* * *

Այն մի քանի օրերը, որոնք ինձ էին տրված որպես ընդմիջում, օգտագործեցի, քիչ ժամանակակից ոճով ասած, կազմակերպչական բնույթի հարցեր լուծելով: Սկսած իմ պաշտոնական աշխատավայրից՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից, որտեղ հարկ եղավ ճշգրտել աշխատանքային վերակարգի ու աշխատաժամանակի հետ կապված որոշ հարցեր, վերջացրած անհրաժեշտ պիտույքների հավաքումը, ամեն ինչ ի սպաս դրեցի այդ նպատակն իրագործելուն: Օգտվելով ընդմիջումից, նորից կարդացի Վեհափառ Հայրապետին և նրա կենսագրությանը վերաբերվող մի քանի գրքեր, որոնցից ինձ համար համապատասխան նշումներ կատարեցի, կարդացի այն մի քանի հոդվածները, որոնք զետեղված էին Մայր Աթոռում 1956 թ. տպագրված «Վազգեն Ա, Հայրապետ Հայոց...» ժողովածվի մեջ: Այնպես որ, երբ 1983 թ. մարտի 28-ին ես նորից մեկնեցի Մայր Աթոռ, Կաթողիկոսի վերաբերյալ իմ գիտելիքները, գոնե իմ կարծիքով, արդեն պատշաճ մակարդակ ու համապատասխան խորություն ունեին:

Հուզված էի և, եթե կարելի է այսպես ասել, վարարած: Անշուշտ այդ էր պատճառը, որ մտնելով Վեհափառի մոտ և ողջույնի արարողությունը դեռ չավարտած, վրա տվեցի.

- Վեհափառ, մեծ գործ ենք սկսում:

Նայեց ինձ խորհրդավոր ժպտալով.

- Իրա՞վ, բայց կարևորը մեծ գործի մեծ ավարտն է, այնպես չէ՞:

Տոնը հանդարտ էր, զգաստացնող:

- Գիտեք ինչ եմ խնդրելու, Վեհափառ, – քիչ լռելուց հետո սկսեցի ես, – ես հիմնականում պետք է աշխատեմ Մայր Աթոռում, և եթե այստեղ գոնե մի փոքրիկ սեղան լիներ...

- Ինչո՞ւ փոքրիկ սեղան: Մենք ձեզ առանձին աշխատասենյակ կտրամադրենք, – Վեհափառը ժպտաց, ոտքի ելավ և ձեռքով իրեն հետևելու շարժում արեց, – գնանք:

Բարձրացանք Վեհարանի երկրորդ հարկը նույն արագ, շեշտակի քայլվածքով, որին արդեն ծանոթ էի: Ինձ «ի գործ» էր առաջնորդում ինքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Տ.Տ. Վազգեն Առաջինը: Շոյվեցի և հուզվեցի այնպես, որ... սայթաքեցի աստիճանների վրա:

Վեհարանի ծայրաթևում գտնվող ընդարձակ, լուսավոր սենյակի նույնպիսի «ընդարձակ», ապակեպատ գրասեղանի առջև Վեհը կանգ առավ:

- Սա իմ նախկին գրասեղանն է, – նա գորովանքով ձեռքը սահեցրեց մակերեսի վրայով, – երկար տարիներ...

- Արքայական պայմաններ են, – չկարողացա հիացմունքս թաքցնել ես, – կցանկանայի հենց այստեղ աշխատել, կարելի է, այո՞:

Պատասխանը քաջալերիչ մի ժպիտ եղավ և գլխով համաձայնության նշան:

Վեհափառը նորից տնտղեց իր գրասեղանը և դարձավ ինձ:

- Դուք ե՞րբ եք մտածում վերջացնել աշխատանքը:

Հարցը թե՛ հասկանալի էր, և թե՛ տրամաբանական: Եթե մենք արդեն ճշտել էինք աշխատանքի սկսման պահը, դրա հետ կապված այլևայլ մանրամասնությունները, ապա աշխատանքի վերջնաժամկետը չէր կարող չհետաքրքրել «գործատիրոջը»: Այդ հարցին ես սպասում էի:

- Վեհափառ, 1985 թվականի սեպտեմբերին լրանում է Ձեր կաթողիկոսական գահակալության երեսնամյա տարեդարձը: Ես կաշխատեմ այդ ժամանակ ավարտել «Տարեգրությունը»:

Գլխով անհամաձայնության նշան արեց:

- Այդ ժամանակ գիրքն արդեն պետք է լույս տեսած լինի, – խոսքը շարունակեց, շեշտելով բառերը, – դուք աշխատանքները պետք է ավարտեք 1985-ի սկզբներին:

Սա հրաման էր: Ճիշտ է, ասված էր բարեկամաբար, ավելի շատ բացատրելու եղանակով, բայց հրաման էր: Հասկացա, որ այս հարցում որևէ խախտում բացառվում էր:

- Կլինի այնպես, ինչպես Դուք եք կամենում, Վեհափառ:

Ձեռքով համաձայնության շարժում եղավ, ապա աշխատանքի սկզբի կապակցությամբ Հայրապետական բարեմաղթանքներ, և... ես մենակ եմ իմ վիթխարի աշխատասենյակում, Վեհափառի ճոխ ու շքեղ գրասեղանի առջև...

Սկզբում չէի կարողանում ինձ հավաքել: Ես երազում էի ընդամենը մի անշուք գրասեղանի մասին, թեկուզ Մայր Աթոռի ամենահեռավոր անկյունում: Չգիտեմ ինչու կարծում էի, որ ինձ աշխատատեղ կտրամադրվի տպարանում: Իսկ հիմա ինձ տրվել է առանձին աշխատասենյակ, մի փաստ, որի մասին մտածել անգամ չէի համարձակվում և այն էլ՝ Վեհարանում, որտեղ սոսկ մտնելը երազանք է եղել ինձ համար: Սա նշանակում էր, որ գործիս բերումով ես պետք է անընդհատ շփվեի այս հետաքրքիր մարդկանց հետ, որոնք իրենց հասարակական-քաղաքական դերի բերումով, նույնիսկ առանձին անուն ունեն՝ հայ հոգևորականություն, որոնք արդեն 1500 տարի է, ինչ իրենց ուսերին են տանում հայկական գրական-մշակութային կյանքի ամբողջ ծանրությունը, և որոնցից յուրաքանչյուրը, գոնե ինձ համար, խորհրդավոր ու ինքնատիպ անհատականության մարմնացում է եղել: Եվ վերջապես, թերևս ամենակարևորը. ինչպես նախորդ խոսակցության ժամանակ ասաց Վեհափառը, իր կյանքի ու գործի հետ կապված մեկից ավելի իրադարձություններ կան, որոնք ոչ մի տեղ արձանագրված չեն, իսկ տարեգրողը դրանք անտեսելու իրավունք չունի: Իսկ սա էլ նշանակում էր, որ ես բազմաթիվ անգամներ պետք է լինեմ անձամբ Վեհափառի մոտ, խոսակցություն սկսեմ նրա հետ, այլևայլ փաստեր ճշտեմ, այսինքն՝ այժմյան ոճով ասած, մշտապես կապի մեջ լինեմ նրա

հետ: Դա, կրկնում եմ, բազում անգամներ, և իմ աշխատանքային գործունեությունը հետագա մի քանի տարիների ընթացքում հենց այդպես էլ ընթացավ: Այս կապակցությամբ հիշեցի իմ ծանոթ մեծերից մեկին, որը հուզումնառատ երազկոտությամբ պատմում էր, որ իր 82-ամյա կյանքի ընթացքում մեկ անգամ հանդիպել էր Մկրտիչ Կաթողիկոս Խրիմյանին և մեկ-երկու խոսք էր փոխանակել նրա հետ: ՈՒթսուներկու տարվա ընթացքում մարդը միայն մեկ անգամ հանդիպել և ընդամենը մի քանի բառ էր խոսել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Իսկ ես ահա...

Մի քանի օր անց, 1983 թ. ապրիլի 1-ին, Վեհարանի իմ վիթխարի առանձնասենյակում, Տ.Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսին պատկանող գրասեղանի վրա ես գրիչս դրեցի թղթին: Սկսվեց...

Ապրիլի 1-ն էլ՝ «Խաբելու օրը», միտումնավոր էի ընտրել՝ դրանով սրամտելու նյութ տալով Վեհափառին, քանզի վաղուց նկատել ու ինձ համար արձանագրել էի այն նուրբ հումորը, որով այնքան հագեցած էր լինում Ն.Ս.Օծության թե՛ գրավոր, և թե՛, մանավանդ, բանավոր խոսքը: Եվ իրոք, ապրիլի 1-ի հետ առնչվող բազում սրամտությունները, կապված «Տարեգրության», այլևայլ խնդիրների հետ, որոնք, ի դեպ, մեկ առ մեկ գրի առել և խնամքով պահում եմ, անպակաս եղան:

Ի՞նչ եղավ տարիների իմ տևական, համառ աշխատանքի արդյունքը, այսօր հայտնի է: Արձանագրեմ միայն, որ «Համառոտ տարեգրությունը» ստեղծվում էր աննախանձելի ժամանակներում և կաստայացած մտածողության թագավորության տարիներին, որոնք այսօր պետականորեն որակվում են ամենախստաշունչ բառերով ու սուր պիտակավորումներով: Թերևս այդ էր պատճառը, որ եղավ այն, ինչ եղավ:

Վերջնականապես ավարտելուց ու խմբագրվելուց հետո, ըստ որում խմբագիրը ինքն էր՝ Վեհափառ Հայրապետը, «Համառոտ տարեգրությունը» բոլորի և մանավանդ իմ անեզր ոգևորության պայմաններում տպարան իջավ 1985 թ. մայիսի 13-ին, 878 էջ ծավալով, սակայն տպարանից վերադարձվեց և «փոքր-ինչ» խմբագրվեց, դառնալով 600 էջ: Երկրորդ անգամ տպարան իջնելուց և կիսով չափ շարվելուց հետո, այն նորից հետ եկավ և շուրջ 500 էջ դարձած՝ երրորդ անգամ մտավ տպարան: Այս «բարեփոխումների» ժամանակ, ինչպես դժվար չէ կռահել, անկարելի եղավ ըստ ամենայնի հետևել

հրատարակչական աշխատանքներին, որի հետևանքով գրքում մեկից ավելի եղան անցանկալի վրիպումները, մի բան, որ իրավացիորեն նշեց բանասեր Սուրեն Քոլանջյանը «Էջմիածին» ամսագրում հրատարակված գրախոսականում: Իրադարձությունների տխուր վերջաբանն այն եղավ, որ «Համառոտ տարեգրության» լույսընծայումը չհաջողվեց հասցնել գահակալության հանդիսությանը, այսինքն՝ 1985 թ. սեպտեմբերին, որի համար նախատեսված էր, և որին նպատակաուղղված էր իմ ամբողջ աշխատանքը, այլ շուրջ կես տարի ավելի ուշացումով...

Եվ այդ էր, անշուշտ, պատճառը, որ երբ ես, 1986 թ. սկզբներին մտա Վեհափառի մոտ գրքիս նոր ստացված ազդօրինակները տեսնելու համար, ընկճված էի ու անտրամադիր: Վեհը, հասկանալով հոգեկան դրությունս, ուրախ-հախուռն խոսքով դիմեց ինձ.

- Պարո՛ն Սուրեն, Թումանյանի խոսքերը հիշո՞ւմ եք:

Եվ չսպասելով իմ պատասխանին նույն ոգևորվածությամբ շարունակեց.- «Գո՛րծն է անմահ, լա՛վ իմացել, որ խոսվում է դարեդար»: Ահա մեր գործը, – ինձ մեկնեց գիրքը, – պարոն Սուրեն:

Ժպտացի մի կոտրված ժպիտով:

Աշխարհ (Փարիզ), 1988, հուլիսի 16-30